ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 299 Ա ք.Արտաշատ

19 հոկտեմբեր 2023թ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 17.10.2023 թվականի թիվ 1765-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Մասիս համայնքի ղեկավարի 05.10.2023թ. թիվ 6726 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմին հատկացված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել 7401.0/յոթ միլիոն չորս հարյուր մեկ / հազար դրամ միանվագ օգնություն Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների տրամադրման համար:

2.Վճարումը կատարել Մասիս համայնքապետարանի լիազորված անձ՝ աշխատակազմի գնումների բաժնի պետ Քոչար Խաչատրյանին:

3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով 5-օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

Восстановимая подпись

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս.ԹԵՎՈՆՅԱՆ